



ԵՐԾՈՒՒ

ՎԱՄՊՈՒՐԱԿԱՆ

ԹԻՌԻՅԵԱԼ ՀԱՅՐԵՆԱՄԷՐ ԹԼԻՕՔ
ՅԵՐԾՐՈՒՆԻ ՄԵՆԱՍՏԱՆԷՆ ՎԱՐԸԳԸՅ

ԽՄԲԱԳԻՐ ՀԱՅՐԵՆԱԽՕՍ
ՄԿՐՏԻՉ ՎԱՐՊՆԱԳԵՏ ԽՐԻՄԵԱՆ

ՀԱՏՈՐ ԵՐԿՐՈՐԴ

ՓԵՏՐՈՒԱՐ 1858 . ԹԻՒ . 2 .

ՎԱՆՏՈՍՊ

՚Ի ՏՊԱՐԱՆԻ ՎԱՄՊՈՒՐԱԿԱՆ ԱՐԾՈՒՈՅՆ
՚Ի ՎԱՐԱԳ



PLATE

PLATE

PLATE

PLATE

PLATE

PLATE

PLATE

PLATE

նոցին բերելով 'ի սէր եւ յերախտադիտութիւն յորդորէ ըզ
նոսին . իբրու թէ նախապատակ առաքեալն Թադէոս հեռաց-
եալ եւ մոռացեալ իցէ յոժ որպէս մեռեալ 'ի սրտէ Հայաս-
տանեայց եկեղեցւոյ : Որ քան , իւ հնար իցէ այս մոռանալ
կամ անյիշատակ թողուլ զանկշիռ երախտիս այնպիսում' Հօր .
որ 'ի Քրիստոս Յիսուս ծնաւ զմեզ երկամբք վշտակիր չարչա-
րանաց իւրոց եւ իբրու դայեակ եւ դատախարակ գիեցոյց Ա-
ւետարանին կաթամբ . մինչեւ դեռածին մանկունք աճեալք
եւ զարդացեալք հաւատով' հասին 'ի չափ կատարմանն Քր-
իստոսի :

Եւ այս յիրաւի . քանզի այն ինչ երկեաւոր Սերմանահանն
'ի գլուխ լերինն Ձիթենեաց լիազեղուն ընանելով 'ի սերմա-
նակալ գոգս ոգւոց ժիր մշակ մաճակալացն' օրհնելով զնոսին
հրաժեշտ տայր եւ վերանայր յերկինս . անդէն քրտնապատակ
հողագործք աշխահալար ընդ սերման Բանին եւ զարօր եւ
զխով 'ի յուս իւրեանց առեալ զխաշն ասեմ դժուարակիր
չարչարանացն , լծեցան մի մի կամ երկուս երկուս ընթացան
'ի յանգատանս քառակողման աշխարհաց վարել եւ հերկել
զառ 'ի վեց հազար ամաց անտի մնացեալ եւ կորդացեալ
երկիր :

Թադէոսն այն , որ գոգ թէ ցանկանալով զրախտալար օհ-
մանացն , գուցէ խնդիր իմն մատուցեալ իցէ Յիսուս վարդա-
պետին . Տէր , Ժտեմ , մինչ վիճակաւ բաժանես զաշխարհ 'ի
վերայ աշակերտացդ' տուր ինձ զմասն Մասեաց լերին Այրարա-
տայ եւ զամբողջ երկիրն Հայաստանեայց . ուրանոր քառալը-
տակեան գետք ագինաբուխ յորդախաղաց ընթանան ոռո-
գանել զանդ , ուր հանդերձեալ եմք զատոք ցորեան Աւետա-
րանիդ կենաց լիաբուռն սերմանել : Այս խնդիր փառադեմի
եւ հաճոյական լեալ առաջի Յիսուս վարդապետին կատարէր
զայն յետ համբառնալոյն իւրոյ առ Հայր փառակից տուրք
Հոգին . որ յորժամ 'ի նոր խնջոյս վերնատանն արբուցանէր
զամենեւին ոսկեղէն բաժակաւ շնորհաց , անդէն հրաման տայր
մերոյն Թադէի երթալ փութով յիւր ցանկալին Հայաստան

րծր քարոզութեան իւրօրրիկ անդն հրեակրօն գերդաստանին եւ ինմա ցանեղ զբանին սերմն : Գիտես, ասէր, բարեբախտիկ իշխանոք Տուբխա, որ առաքեցայ առ քեզ ի բնիկ հայրեւելոյք Յերուսողէմէ իբրեւ զուարթունն Ռափայէլ առ նախնին քո գորովասիրտն Տօլթիթ . ոչ հանդոյն նմին զաչս մարմնոյդ լուսաւորել լեղեաւ հրաշարի ձկան կամ ուղեկից լինելով քեզ երթալ յերկիրն Մարաց առ Գարայէլ բերել անդուստ քեզ զարծաթ կորստական . այլ ի բանալ զաչս ոգւոյդ ՚եկեալ եմ առ ի տեսանել քեզ զարեւն կենաց Յիսուս ծագեալ նոր սքանչելիօք ի հայրենիդ Հրէաստան եւ բաշխել քեզ առատածիր պարգեւօք զարծաթ բանին շնորհաց :

Արեմն փութա, մի յապաղիր, երջանիկդ Տուբխա, վաճառել զերկրաւոր ինչս քոյին . որով կարիցես ստանալ յինէն ըզվաճառս երկնաւոր գանձուն թագուցեալ յանդս Աւետարանին . որ արդ ինեւ քեզ քարոզի : Լուր, հաւատա եւ մկրտեսց . զի կեցցես եւ մի լիցի քեզ անհաւատութեամբ կորնչիլ իբրեւ զիշխանս Երուսողէմացւոցն . որք անհաւատութեամբ այնչափ կուրացան, մինչեւ զմօտակայ Լոյսն չկարացին տեսանել եւ ժպրհեցան եւս զՏէրն փառաց անարգաբար իխաչ դատապարտել :

Հաւատայր սներկբայ մտօք իշխանն Տուբխա, իբրեւ պըտուղ նախախայրեսոյ Եդեսեա բաղաքի ընծայէր զինքն Յիսուսին, զոր ճաշակեալ բողջորութեամբ ուրախ լինէր յոյի պաշտօնեայն Աւետարանին :

Առջնորդ Հոգին սզդ առնէր անդանօր թադէի . թէ այլ մի եւս դադարիր դու յառանին եկեղեցիդ . էջ յապարանս ուր մօտօք քեզ անձկութեամբ աչաց մեծն Արդարիտս . քանզի պատուէր ընկալար ի Աւարդապետէն քուժմէ եւ յայլազնիս հեթանոսաց քարոզիլ զԱւետարանն :

Սինչգեւ մտանէր թադէոս ընդ բարձրակամար դրանէն արքունեաց եւ ընդ փաղփիւնափայլ պատշգամս անցեալ մուտ առնէր յարքայագահ սենեակն տրեխազդեցիկ փռնապատ ուսիւք , անփառունակ գեղջկային բրդգգեալ հանդերձիւք ,

ուր սքանչելիք անհղահրաշ երեւէր իդէմս մարմնատիպ հրեշ-
տակին թագէի . ընդ որ զարմացեալ յառնէր իսկոյն յիւր
չքեղակազմ գահոյիցն եւ զգլուխն ցածուցետլ երկիրպագա-
նէր գեղջուկ Գալիլեացւոյն : Նախարարք որ առ արքայիւ բազ-
մեալ՝ ընդ այս նորատեսիլ նշան ապշեալ հիանային . թէ զի-
ա՞րդ բարձրասիւս թագ Արշակունեաց անօրինակ քաղաքա-
վարութեամբ իմն խոնարհեցաւ այսպիսեօք առաջի գծուծ
օտարականին :

Անդ արքայն Հայոց Արգար յետ ընդունելոյ զԱւետարա-
նին ողջոյն՝ խօսէր հոսելով զկայլակս յաչացն . Բարեաւ եկիր
Առաքեալդ՝ Նազովրեցւոյն Յիսուսի . որում փախագէր անձն
իմ ի տես աստուածաբեղ մարմնոյն դիմաց . արդ յերեսօքոյն
լուսազգեսաց նկատեմ զճշդութեան պատկեր նորին : Հաւա-
տամ , զի դու տշակերտ ես իսկ աշխարհալոյս Վարդապետին
քոյոյ . եւ միանգամայն բժիշկ իմ անողջանալի վիրաց : Ժամէ
արդէն , զիս բժիշկեա դեղովք զօրաւոր բանիցդ . ես ոչ իբրեւ
զԵրուսաղէմացի բորոտն մերձ կացեալ առ Յիսուս աղերսեմ
սրբել զիս . այլ յոյժ ի բացուստ անտեսարար հաւատացի
նմին եւ աւասիկ եւս հաւատամ սրտիւ :

Այժ կեղցես դու պատասխանէր թագէտոս , քաջահաւատ
առ արինութեամբդ եւ սրբեալ լիցիս այժմ յայդ անբաւժելի բո-
րոտութենէդ . ոչ իբրեւ զՆէեման Ասորին եօթն անգամ ի-
նՅորդանան լուանալով , հապա յանուն Յիսուսի խաչելոյն եւ
եթ՝ ողջ լիցիս ի վերացդ եւ թօթափեցին ի բէն կեղեւանք
սխտալից մորթոյր . իբրեւ մանկամարմին նոր նորոգեցիս գե-
ղեցկութեամբ ըստ նմանութեան Արծուոյ :

Քան զամենայն թագաւորս երկրի երջանիկ ես դու , ար-
քայդ Հայոց մեծաց Արգար , որ սիրահրաւէր նամակաւդ կա-
մէիր ասպնջական լինել հիւրոյն Երուսաղէմի . նմին ասեմ , որ
իբրեւ անընդունակ շրջէր ի միջի անարդիւզ դպրաց եւ փարի-
ոհեցոց անտուն եւ անօթեւան , բազում անգամ ի լեառն
Զիթենեաց բացօթեայ բնակելով :

Վստեն , որչափ ուրախութիւն եղեւ առ ի խաչ դիմող տը-

խուր սրտին Յիսուսի 'Նազեթոյդ հաւատապայծառ նամակ' զոր
այն ինչ 'ի ձեռն Անդրեայ եւ Փիլիպպոսի մատուցին առ Յի-
սուս եւ ընդ բանալ կնքոյն՝ անդէն հոտ բուրման անուշահոտ
հաւատոյդ բուրեաց 'ի բիմն Աստուածութեան . որով զուարճա-
ցաւ Յիսուս յոգի իւր եւ հեղաձայն բարբառով գոչեաց .
« Եհան ժամ զի փառաւորեցի որդի մարդոյ :

Այսպէս դու փառաւորիչ գտար Որդւոյն Աստուծոյ յա-
ւուրս . հանդիսալին ծաղկազարդին . մինչ մանկտին եւ ծերբ
Հրէից զոսոս . ձիթենեաց եւ արմաւենեաց նուիրէին անփա-
ռունակ բազմելոյն 'իդան դանդաղաճնմիկ իշոյն : Բայց լուսն
մի թէ հրաշհաւատ Արքայ , թէ զիարդ յետ միոյ շաքա-
թու նոյն Աստուած բարեբանեալն ուխտնայիւք՝ անարդաբար
'ի խաչ բարձրացաւ . գուցէ տեսին իսկ աչօք եւ դեսպանքն
բոկացեալք 'ի զննին յապաժոյժ տեսարան երաշխեպ խաչին ,
ընդ որ երկիրնքն անդամ անհանդուրժ լեալ սեւապարոյր քօ-
ղով խաւարանայր 'ի միջօրէի :

Ընդ այդ աշխարհասուգ տեսարան խաչին , մի թէ եւ ա-
րեւն Հայաստանեայց ժողովեալ համբեր արդեօք . ոչ զնոյն
սեւաթոյր քօղ զերեսօքն արկեալ զաշխարհաւ մերով պատեաց
նսեմաստուեր շուք . առ որ եւ իմ հայեցեալ ասացի ընդ Ա-
թենացի իմաստնոյն . « Եւամ հեղինակ բնութեան չօրջարի ,
կամ շինուած աշխարհիս եղծանի ո : Մինչ զայդօրինակ մահ
անպարտական խաչելոյն լուայ ես 'ի հեռուստ , անդէն բոր-
բօքեցաւ յոգի իմ հուր սրամտութեան . կամէի քաջախումբ
զօրօքս խաղալ յերուսաղէմ եւ վրէժխնդիր լինել Աստուած-
որդւոյն փառաց : Մանաւանդ արդ եւս նոյն սրամտութեամբ
փառի սիրտ իմ , յորժամ ոճով ինձ յուշ արկանես զճառ խա-
չին Քրիստոսի :

Իսկ դու , ով ձրիատուր բժիշկդ ախտացեալ մարմնոց եւ
հոգւոց , աւասիկ բուժեցայ ես այցելութեամբ Հրեշտակիդ
Աստուծոյ . այլ կամիմ , զի ողջամբ իմ Հայաստանեայց ժողո-
վուրդ սրբեցին 'ի բէն . որք առ հասարակ բորոտեալ են չա-
լաչար կեղծիք կռամոլութեան : Ընթացին ուրեմն աւետա-

ւոր ոտք բոյն առ ամենայն սահմանս իշխանութեան իմոյ .
տամբեզ ահա զարքունական հրովարտակ . զի մի ոք գիմա-
դարձ լիցի աւետաւոր Բարոզչիդ :

Այլ որ Յիսուսեան հրովարտակաւ ընդ ամենայն աշխարհ
քարոզել հրաման առեալ էր, զիջանէր ընդունել եւ զթուղթն
Արգարու եւ նոյնք համարձակ քարոզելով 'ի քաղաքս եւ 'ի-
դիւղս' հասանէր մինչեւ ցԱրթազ գաւառն . ուր իշխէր Սա-
նատրուկ արքայն բեռորդին Արգարու :

Ընդ զարօր խաչին արկեալ 'ի պնդագոյն երկիր Շաւարշական
դաշտին եւ զսիրմն բանին քարոզութեան ցրուէր յանդաս-
տանս պոլսյ առատապէս : Սիրտն , որ իբրեւ երկիր պարարտ
էր յընդունակութիւն երկնապարգեւ սերմանն՝ անդէն ծլէր 'ի-
վեր, աճէր եւ բարձրանայր հասկազեղ հաւատով չքնաղ օրի-
որդն Սանդուխտ . որ 'ի բեւ զձայն Թագէտս խիտն խոնար-
հէր 'ի լուր զունկն իւր դիւրագգաց . Թողոյր կամաւ զհայ-
րենի տուն Թապաւրու թեան, հասանել անձկայր տու փեսայն
Յիսուս : Ո՞ւր, 'ի բանալին խաւարչտին, որ իբրեւ վայելազարդ-
ինն սրկապան կազմէր հրաշագեղ Աուսին Սանդխտոյ . սուրբ
կապանքն իբրեւ օժիտ հարսնութեան իւրոյ . կուսանուէր ամ-
բիժ կարմիր արիւնն իբր անուշակ գինի խրախճանաց սեղա-
նոյն : Թաղաւորն երկնից ցանկացեալ գեղոյ, նուիրական կու-
սիս՝ յերկնուստ անտի 'ի բանդն իջեալ՝ ձայն արկանէր նմին
Սօղոմոնեան սիրաերդովն . « Արի եկ, մերձաւոր իմ, աղաւ-
նեակ իմ , կատարեալ իմ , եկ տարայց զքեզ 'ի սրակապան
երկնից , հանգիստ առցես անդանօր յեցեալ անախտ սիրոյ
միութեամբ առ նախապարկապ վէմն :

Հարսնախօսն Թագէտս պսակադիր լինէր աստանօր եւ տուեալ
զօրիորդն Սանդուխտ 'ի ձեռս երկնաւոր փեսային Յիսուսի
ասէր, այս յինէն քեզ, փրկիչդ իմ, լիցի ձօն նախանուէր . զոր
իբրեւ շուշան ծաղիկ կուսագեղ 'ի Շաւարշական բուրաստա-
նէս քաղեալ իբրու հոտ անուշ Բրիստոսիդ վերընծայեմ :

Այսպէս ահա երանելին Թագէտս ոչ միայն զիցոյն Սան-
դուխտ այլ եւ զհաղարաւորս յԱրտաղական Հայոց հարսնա-

ցուցանէր Յիսուսի . յորոց բազումք յասպարիսի նահատակու-
թեան արեամբ մրցելով ընդ ուրացելոյն Սանատրկոյ՝ կատա-
րեցան մահուամբ 'ի սէր Փրկչին : Որոց մարմինք իբրեւ քա-
րինք սուրբ թաւալեալք յերկիր , շինէր եւ կառուցանէր նո-
քօք զնախկին հիմն Հայաստանեայց եկեղեցւոյ ճարտարապետն
Թադէոս . յորոյ վերայ զշինուածն կատարէր պարգեւական
զաւակ կենդանի նշխարաց նորին Գրիգորիոսն Պարթեւ :

Ինչ այս թաւալեալ սուրբ քարինս՝ թաւալէր նահատակու-
թեամբ եւ երանելին Թադէոս յանագորոյն ձեռանէ ամբարըշ-
տին Սանատրկոյ եւ իբրեւ վէմանկիւնաքար զնէր 'ի հիմն հայ-
կական եկեղեցւոյս , ամիրօփեալ 'ի շիրիմ հանգստեան առ արիւ-
նագեղ Կոնստով ծաղկաւետեալ դաշտին Շաւարշական : Անդ 'ի-
վերայ լուսապատ նշանագործ մահարձանին Աստուածպաշտու-
թեան՝ կացեալ Վասպուրական Արծուին դռէ սրտառուչ ձայ-
նիւ . « Թադէոս Առաքեալ , ընդ էր կաս հեռի » :

ԱՌԱՔԻՆԻ ՎԱՆՃԱՆ Տ . ԳԱՐԻԻԷԼ ՎԵՃԱԿԱԿԱԼ

ԱՐԲ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ ՆԱՀԱՆԳԻՍ

Յաւուրս քառասնորդաց՝ 'ի վեցն փետրվար ամսոյն հինգ-
շաբաթուոյ . այն ինչ գիշերավար պահն երրորդ հանգիստ կար-
դայր Վարագոյ սուրբ ուխտիս միաբանութեան եւ Ժառան-
գաւորաց Վարժարանի եկեղեցանուէր աշակերտքն պատ-
րաստէին 'ի նինջ գիշերային : Անակնունելի իմն եղանակաւ
գուժ 'ի բերան եհաս 'ի ձեռս մեր նամակ Վասպուրական Ար-
ծուոյն Վրժանապատիւ վերատեսչի վարժարանիս . յորում կայր
մակագրեալ ըստ տիեզեր սեւութեան գիշերապահուն՝ բանս
տխրածին եւ տեւամած . այս է :

Սէր իմ

Ի յեր աղետալիւ թռուցանէ այսօր ձեզ եւ համօրէն ուխտիդ
Արծուին սգասիրտ գուժելով զմահ՝ Տ . Գաբրիէլ Արք եպիսկո-
պոսին , որոյ յուղարկաւորութեան հանդէս 'ի վաղիւն կատարի :

Ուստի . դու եւ համօրէն աշակերտք խառնագաւորաց զբարոցին , ընդ որո եւ այլ միաբանք , որք փափագին , ածապարես ջիշ գոնեա ժամաւ յառաջ բան զարշալոյսն առաւօտեան 'ի սուրբ Պօղոս մեծ եկեղեցին գտանել : Կատարելով ըստ գրութեանս լերուք ողջ :

Մ . Վ . Ս .

Փետրւար . 6 .

Յանկոյսեր եկեղեցի

Ինչ այս դուժ աղետաբեր չարժեալ ամենայն ուխտն Վարդայ հանգերձ դպրոցական աշակերտօք , զիշերագնաց տրխրութեամբ իջաք փութապէս 'ի սուրբ Պօղոս եկեղեցին . ուր յաւարտին խորհրդեան սրբոյ՝ Պատարագին՝ այն ինչ պատրաստէր հանգէս յուղարկաւորութեան մինչեւ ցշիրին՝ եղեն ոչ սակաւ վիճմունք բանից եւ հակառակութեանց 'ի միջի ժողովրդեան սակս անդի հանգստեան գերեզմանի նորին . զի ոմանք պնդէին 'ի լիմ սուրբ անապատն տանել . ոմանք 'ի սուրբ վանս Վարագայ՝ ընդ այլ դիրս վիճակաւոր առաջնորդաց հանգուցանել . ոմանք 'ի փոքրիկ պարտիզի 'ի սուրբ Նըշան Առաջնորդական եկեղեցւոյն . իսկ կէսք 'ի Հայկապանից գերեզմանատանն ըստ իւրումն նախարան կտակի զօրութեան . Իւ յերկարելն այսպիսեօք վիճաբանութեան , 'ի վերջոյ յաղթէր յամենայնի Առաքեալն Պօղոս զօրութեամբ բանից իւրոց « Եթէ կտակ յետ մահուան հաստատուն է » , որով զբաւինէր վիճաբանութեանց եւ որոշելու ըստ իւրումն անհրաժեշտ կտակի թաղել զինքն ընդ հովանեաւ սուրբ Աստուածածին եկեղեցւոյ Հայկաւանից : Եւսկա կարգեալ տողեցաւ հանդէս մեծ եւ փառաւոր . զի յառաջոյ երթային երկու դաս միաշար մանկունք դպրոցականք . զինի նոցին կարգ Բահանայից՝ Վարդապետաց եւ բուրվառակիր սարկաւազաց ամենայն սրբանուէր եկեղեցազարդ հանգերձանօք : Գերապատիւ Յովհաննէս Եպիսկոպոսն Եդեսեան (որ հիւրութեամբ գտանէր աստանօր) կայր 'ի միջակէտի յառաջոյ դադաղին ամենա-

փայլ շքեղ հանդերձիւք : Իսկ դագաղի պերճ շքեղութիւն անցանէր զանցանէր քան զամենեքեմք . զի կերպասավառ եւ ճամկազարդ փողփողումն նորին խառնեալ ընդ պայծառութեան աւուրն ջինջ արփենոյն ճառագայթից, զարմանալի իմն նկարիւր տեսողաց :

Ի վերայ դագաղին կայր բարձրացեալ Առաջնորդական ականակուռ Արքունի նշանն ի սեաւ կերպասի զետեղեալ : Թողում ասել անհամար բազմութեան բաղաբացւոց եւ գիւղականաց, որք յառաջնոյ եւ զկնի երթային խառն բազմութեամբ, ընդ որոս եւ ամենայն երեւելի հայ Որեալք բաղաբիս եւ այլազգիք ոչ սակաւք :

Արդ՝ այսպիսի նոր եւ շքեղ հանդիսիւ հանեալ արտաքս յարեւելեան դռանէ քաղաքիս՝ հանգիստ ետուն ի Հայկազանս սուրբ Աստուածածին եկեղեցւոյ . ուր զկնի կատարման զեկեղեցւոյն կարգ՝ Սրբաղան Տէր Յովհաննէս Եպիսկոպոս Եղեռեան, խօսեցաւ ձիգ ճառ մի ի հանգիստ երանելոյն, յորում գործէր զվարս նորին եւ զքաղաքավարական կենցաղ ընդսբութեան անձին եւ յորդորէր զյուզարկաւորսն մխիթարիլ ի հոգի, զի արժանի եղեն առնուլ զվերջին նորին սուրբ օրհնութիւն : Ապա տարեալ հանդուշաւ ի միջակէտ պարտիզի նոյն եկեղեցւոյ ի վիր փառաւոր : Յորոյ վերայ ունի բարձրանալ գմբէթ վայելուչ դամբանական վերտառութեամբ ի յիշատակ անմահ անուան իւրոյ :

Եւ սա ամաց 67 ից . ձնեալ ի թիւ Հայոց . ո . մ . խ . եւ ըստ իբր ամաց 23 թողեալ զաշխարհս եւ զինչս աշխարհի երթեալ կրօնաւորի ի սուրբ անապատն Լիմ, ոչինչ անսացեալ աղաչանաց եւ յորդոր բանից ծնողաց իւրոց եւ բարեկամաց, որք ամենայնիւ ներհակ էին կուսակրօն կենաց նորա :

Կացեալ ապա ի խտտամբեր վարս միայնակեցութեան, յետ երկուց ամաց ձեռնադրի սարկաւաղ, եւ ընդ դասատու գիտ, նական վարդապետին իւրոյ Յակովբայ Արփիարեան Ակնեցւոյ ճանապարհորդեալ յԱկն եւ յայլ կողմանս Հայաստանի . զկնի երկուց ամաց վերադառնայ յիւր ցանկալի Անապատն :

Յոր զկնի սակաւուց ձեռնադրի վարդապետ , եւ կրկին ընդ նոյն վարդապետին իւրոյ 'ի նպատտ սուրբ անապատին ճանապարհորդի 'ի Պօլիս : Անդ կեցեալ սուղ ինչ վախճան հասանէ իւր խնամակալ Արփիարեան Յակովբ վարդապետին , որով եւ գործ ժողովարարութեան ինքնին միայնիկ ստանձնեալ զկնի եօթն տմաց լիտձեռն օգնականութեամբ 'ի նոյն սուրբ անապատն վերադառնայ :

Եւ զկնի սակաւուց ըստ իւրումն գովանի արժանաւորութեան կարգի վերակացու նոյն մենաստանին , եւ կառավարէ ընդ հոգեւորութեամբ : 'Ի նոյն միջոցի պատահի մահ Յարութիւն Եպիսկոպոսին Անապատիս . ուստի միակամ խորհրդով , եւ իբր մի միայն արժանաւոր նոյն բարձր պաշտօնին՝ կացուցանեն զՏէր Գաբրիէլ ծայրագոյն Վարդապետն 'ի նոյն պաշտօն վանահայրութեան : Յորում ամենայն սիրով աշխատ լեալ 'ի միջոց 21 ամաց համբերատար երկայնմտութեամբ , տոկայլ յօգնատեսակ վշտաց եւ նեղութեանց , էր որ յայլազգեաց , էր որ 'ի բռնակալ ապստամբ քրդաց , եւ էր որ 'ի զանազան տեսակ կարօտութեանց . յետ որոյ յաղագօ վկայեալ Աստուածապաշտութեան իշխանք Վան քաղաքիս արժանաւոր դատեալ , խնդրէն զսո 'ի Մատթէոս Սրբազան նախկին Պատրիարքէն , Առաջնորդ բոլոր Վան նահանգիս . որ թէպէտ յաւետ փրելի էր ինքեան վաճառն ազատ կենցաղովարութեան ճրգնաւորական հանդէս . որպէս գրէ Խորենոսցին « 'Ի նաւահանգիս փութայ նաւ խռովեալ , եւ անձն ժուժկալ խնդրէ զանապատ » . այլ սակայն սիրով զիջեալ 'ի ջերմեռանդ խնդրբնակչացն Վանայ , ընդունի զհրովարտակն յարքունուստ եւ զկոնդակն առաջնորդական արտօնութեան եւ գայ 'ի վարել ընդն պաշտօն հովուութեան :

{ Յամի 1850 խնդրանօք Վանայ բոլոր ժողովրդոց եւ հրամանաւ Յակովբ Պատրիարքի Առաջնորդութեամբ երթայ 'ի սուրբ Գահն Էջմիածնի . ընդ նմին ուղեկից լինին մեծախումբ հանդիսիւ Վանայ համօրէն իշխանք 'ի պատիւ արժանընտրի Առաջնորդին իւրեանց :

Եւ զինի երեսուն եւ երկու աւուր յետ ընդունելոյ զՍրբազան Կարգն Եպիսկոպոսութեան՝ դարձ առնու Ի վիճակն իւր բարձր իշխանութեամբ ։ Մետաքսան ամս աշախաի շրեղութեամբ վարեաց Վանայ եւ բոլոր միջսկաց նորին զառաջ նորդութեան ծանրաբեռն պաշտօն ։ Իսոյն միջոցի վտանգեալ Ի փորահարութեան ախտէ՝ զնի Ի մահիճ ծանր հիւանդութեան, եւ ոչինչ օգնութիւն գտեալ Ի բժշկաց, պատրաստէ զինքն յոռոյն անգարձական ։ Սատի մեծաւ ջերմեամանդութեամբ եւ լի միսիթարութեամբ ընկալեալ զվերջին թոշակն իւրովի ձեռամբ ճաշակէ. եւ ամենայն փնջ կտակ արարեալ իւրում ձեռնասուն աշակերտ Տէր Գէորգ Դարդապետի Տէր Բարսեղեանց ազատ եւ թեթեւացեալ լինի յամենայն նեղիչ պարագայից ։ Ապա Ի վեցն փետրվար ամսոյն յաւուր հինգ շաբաթով՝ առաւօտեան երկրորդ պահուն մինչ սակաւին խօսէր եւ օրհներ զերկիր եւ զազգս Հայոց համօրէն եւ զմերձակայս իւր՝ արձակուրդ տալով ամենեցուն՝ հաշտ եւ զուարթ գլխօք կախց զաչկունս իւր ծանրացեալ Կանոնեաց աշխարհիս, հայել այնուհետեւ Ի լոյսն իմանալի, Ի վայրն մեծողփեան, Ի հարսնարանն անմահ դառնի, որոյ Ի հէր յամենայն Ի կեանս իւր կայր խաչաբարձ ։

Իր սա անձամբ պարթեւահասակ եւ փառահեղ, ալիքն ծաղկեալ եւ լայնատարած, դէմքն ծաղկահար եւ աչկունքն մեղմահայեաց. բարութն վեհանձն, լայնախորհուրդ, համբերատար եւ գթոտ. յընտանեկան խօսակցութիւնս՝ համեստալոյն պարկեշտութեամբ յոյժ զուարճաբան. սիրօղ հին եղանակաց եւ ժամասացութեան. եւ բազում այլ կատարելութեամբ պերճացեալ, որովք կարաց ամո մեծասան հոլուական դաւազանաւ վարել զՎանայ բոլոր նահանգիս առաջնորդական տարժանելի կառավարութիւն ։

Ողբաց արդարեւ համօրէն աշխարհս Վասպուրական յայս կորուստ մեծ եւ անգտանելի եւ ունի ողբալ, եթէ ոչ հաշտ տկամբ նայեցեալ հանցէ Տէր հովիւ ընտիր հօտին իւրոյ փորձ ։

Բ. ՀԱՆԴԻՍԱՐԱՆ ՀԱՅՐԵՆԱՇԻՆ

ԱՌԱՔԻՆԵԱՅ

ԱՐԱՄ ՀԱՅՐԵՆԵՍԵՐ ՆԱՀԱՊԵՏ

Յիշատակ արիապան՝ յաղթութեան անպարտելոյն Հայկայ, այն ինչ տակաւին ՚ի տահմանաց Հայկաձորոյն հնչէր ՚ի Բաբելոն յականջս Բէլայնոցն՝ զդողանի հարեալ սիրտք նոցին յարհաւիրս անհնարին պաշարեալ տաղնապէին յոյժ մի դուցէ շակայն Հայոց զնեւ ՚ի լայնաթեւ հզօր աղեղանէն թուղեալ մինչեւ ցԲաբելոնեան սիրտ թափանցեցէ :

Այլ յետ փոքր ինչ անպանելոյ ժամանակաց, յորժամ շառաչիւն որոտման շանթահար նետին լռէր յականջաց նոցա եւ յորդ վիժումն արեան նետահար կրծոցն Բէլայ բողբէր ուժոյնակի ձայնիւ ՚ի լիւրս Նինոսի եւ ամենայն Ասորեստանեաց, վրիժադործ կատաղութեամբ քինախնդիր լինել արեան հաւուն իւրեանց : Ահա լից ոգիւն որ ՚ի փախուստ խուճապէին երբեմն տնհետահայեաց շտապով՝ ժպրհէին անդրէն ընդ կրունկն դառնալ ձեռք լքեալք զէն առնուլ զօրանային : Կթուցեալ ուր յարշաւանս դիմեալ խիզախէին խաղալ միանգամ եւս ՚ի Հայաստան՝ թերեւս զկարկատուն վայրանկեալ դրօշակն կործանեալ աշտարակին Բաբելոնի՝ յաջողակի յաղթութեամբ կանգնեցեն ՚ի վերայ տանեաց նորակերտ դաստակերտին Հայկայ եւ զուգատ ազգատոհմն Այրարատայ գերեցեն ընդ իշխանութեամբ Բաբելացւոց բռնութեան :

Ըստ ահա հանդիսանայր արիական քաջութեամբ հայրենասէրն Արամ զիւցազնածին սերունդն Հայկայ, որում հեշ-

տայի Թուէր յոյժ մեռանիլ եւ կափուցանել զաչա իւր քան
տեսանել զորդիս օտարածնաց տիրել 'ի վերայ արենակցորդ
տոհմին կամ կոխել զաշմանս բնականութեւնդ երկրին . զոր ձիգ
աղեղամբ եւ նետիւք չափեալ ժառանգ եթող ինքեան քա-
ջահաւն իւր Հայկ :

Այսմ հայրենատուր վիճակիս ժառանգորդ լինել կամեր
եւ Նիւքարն այն Մարգէս ոտնամուկս լեալ համարձակու-
թեամբ յեզերս հայրենեաց աշխարհին մերոյ . Ընդ որ ջը-
հանդուրժեալ Հարմաճնին Արամայ՝ հրաւեր կարդայ 'ի-
յասպարէզ մարտի հինգ բիւր նորատիք , ջերմալիւն , աշխոյժ
ոգի , գեղերեցաւոր երիտասարդաց . որովք իբրեւ կարկուտ
որոտընդոտ ճայթմամբ դուռ գինուց եւ աղեղանց Թօլթափի
յանկարծ 'ի վերայ հայրենակոխ Թշնամոյն , զօրէն տապարահար
մայրաւորաց յերկիր տապաստ արկանէ զբաղձութիւն մար-
դափունի անտառաց եւ գ'Նիւքարն այն 'ի բռին ամեալ
բարձրացուցանէ 'ի ծայր աշտարակի Արմաւիր քաղաքին իւրոյ
ցից երկաթի ընդձակատն վարելով կախել 'ի վարձ եւ հափու-
ցումն հպարտաբարոյ պատերազմատէր ոգւոյն :

Յերկրորդ ասպարէզ մրցի դիմագրաւ քաջութեամբ մին-
չեւ ցկողմանս Ասորեստանի . ելանէ ընդդէմ ահեղ իմն զօ-
րութեամբ սկայածին Բարշամն այն աստուածացեալն յԱ-
սորոց յաղազս անհաւասար արիւթեանն՝ այլ մեռանի անար-
գաբար առաջի զինակրայն մերոյն Արամայ եւ ոչ իսկ 'ի նո-
րին ձեռանէ , որով գոնէ պարծէր դիւթաւալ հսկայն իբրեւ
քաջ 'ի քաջագունէն յաղթեալ :

Յերրորդումն իսաղայ յասպարէզ ընդարձակագոյն յարեւ-
մուտս կոյս 'ի սահմանս Ասպադովիլոյ , հնազանդեցուցանել
նա եւ զԱրգէոս լեառն ընդ իշխանութեամբ Աւագ Մա-
սեաց . Պայապիս այն քաղեայ Տիտանեան իբրեւ զԱրգէոսն
կամի բարձրանալ յաղթութեամբ առաջի մեծին Մասեաց .
այնէ պերճ հսկային Արամայ , եւ 'ի հարկանիլն՝ յաղթեալ
գլորի փախստեամբ մինչեւ ցկղզի ինչ ասիական ծովուն :

Այսպէս անպարտելի բազուկն Արամայ մինչեւ ցկեսարի

այ ձգեալ զԹշնամիսն առ հասարակ պարաւանդեալ կաշ-
կանդէ առ իւրով իշխանութեամբ . եւ հրամայէ բարձրա-
ձեռն զօրութեամբ բոլոր բնակչացն . մի ոք այնուհետեւ
յանգզենացի այլախօս լեզուաւ վարիլ , բաց 'ի նախատուր
հայացի բարբառոյն :

Այսպէս երբակի յաղթութեան դրօշակք երկրորդ դիւ-
ցազնին Արամայ կանգնեալ պարզեցան 'ի ծայր սահմանա-
չափ տեգին իւրոյ , որով ուժգինս հարեալ տնկեաց 'իսիրոս
երկց հայրենագրաւ Թշնամիացն Նխքարայ , Բարշամայ եւ
Պայապիսի : Ընդ ծածանումն այս յաղթանշան դրօշակին
հեռանշմար լեալ 'ի հեռուս բեւտերունդ 'Աննոս ցածեալ
զիջանէր 'ի խտութենէ քինագրգիւռ ոգւոյն . յերկիւղ կասկա-
ծանաց պաշարեալ , մի գուցէ արշաւանք քաջին Արամայ
մինչեւ ց'Նինուէ հասեալ եւ անդ յարքունիս նորին կանգ-
նեաց զհայկանշան դրօշակն : Ուստի դաշինս բարեկամու-
թեան եղեալ ընդ մերոյն Արամայ՝ հրամայէ վարսակալ
մարգարտեայ ամել եւ միանգամայն երկրորդ անուանիլ ին-
քեան 'ի կարգի աշխարհակալութեան իւրոյ : Չարմանք աս-
տանօր , տկարն իբրեւ զօրաւոր ձեւանայ աղուեսաբարոյ վեհ-
անձնութեամբ եւ իբրեւ իշխող տէր տայ հրաման յաղ-
թող Արիւծուն Արաճայ , յաւելուլ 'ի վերայ բնաձիր պարա-
նոցազարդ գեղասիւսու բաշիցն եւ զվարսակալն ժարգար-
տեայ : Այս է նոր եղանակ յաղթութեան խորամանկ թշնա-
մեացն . յորժամ չկարիցեն դէմ յանդիման յասպարէզ ելա-
նել հնարին պատրուակաւ կեղծաւորութեան հաւատարմա-
ցուցանել զանհիմն բարեկամութիւն իւրեանց այսպիսի մե-
ծանձնական առաքինութեամբ . կամ պարզեւօք ընծայից կամ
մեծամեծ երգմամբ եւ դաշնագրութեամբ , մինչեւ 'ի պատեհ
ժամանակի դարանագործ մեքենայիւք ըմբռնեացեն զսրշա-
ւանս ընթացից քաջամարտիկ առաքինւոյն :

Ստեալ 'ի հանդիսարան հայրենաշէն քաջիս , ո՛ր Արամածին
մանկունք , տեսք աստանօր զառաքինի նախնոյն մերոյ դքա-
ւադործութեանց հանդէս . նմանող լերուք նմին հայրենասէր

տրուով : Չէր ոչ դոն առաջի նախնի դարուց բռնակալքն , այլ
առաւել է զօրութեամբ քան զնոսին , թէ յաղթիցէք եր-
րակի թշնամեացն . այսինքն կրից մարմնոյ իբրեւ Նիւբա-
լայ , հեշտութեանց սշխարհիս իբրեւ Բարշամայ եւ Պայա-
պխի . գաղտնագործ սատանայահնար խորամանկութեանց
իրեւելիցծաւորելոյն Նինասի : Մի լիցի ձեզ երբէք հաւա-
տալ կամ հաւանիլ , յորժամ հրամայիցի ձեզ վարակալ պրճ-
նազարդութեան զգլխովք բոլորել . այլ ընդ այն յաւէտ
հաճոյական երեւեցցի ձեզ , զիմաստութեան եւ զհանճարոյ
ոսկեմանեակն զպարանոցաւ ոգւոյն արկանել :

Սիրելի համարեացին ձեզ միշտ առաւել քան զօտարին
սեպհական ձրից պարգեւք Արամիսս բարբառոյն . որում
ի բարւոք բարգաւաճանս խնամ կալարուք : Թէ չիցէք
ձեռնհաս այժմիկ հանգուենառիպ հայրենապաշտպան նախ-
նոյն ձերոյ սլախոս աղբացն անգամ իշխանաբար հրամայե-
լով ՚ի մի բարբառ հայացի եւ եթ հրահանգիլ : Գոնէ խրա-
տուն Արամայ ունին մատուցեալ պատուեցէք զընտանի իե-
զուն եւ մի դուք զհարազատն ընդ խորթոյն փոխանակել
անմտանայք :


Հանճարեղ Նահապեան յետ փրկելոյ այլալեզու ազգացն
խոկայր եւ զնոսին յիստմբն հայկահատին խառնել , եւս բազ-
մաթիւ որդւովք աճեցուցանել զազգն . ուստի իմաստու-
թեամբ զնէր զօրէնս համօրէն այլասեռ հպատակացն յիւրն
բարբառ միայն վարիլ . բանցի գիտէր հաւատալ աւ , թէ քան
զամենայն ինչ զօրաւոր է կապ միաբարբառ լեզուին , զայլա-
խօսիկ ազգս յօդել ՚ի միութիւն ամբողջութեան միոյ
ազգի :

Քանի պարսաւանս կարգան աստանօր Արամայ հողա-
ցեալ ոսկերք այժմեան նորասէր երիտասարդաց . որք զօ-
տարին զհետ այնչափ հետեւին , մինչեւ խալառ մոռանան ըզ-
հայրենաւանդ բարբառն եւ շատք եւս յաւէտ պատիւ ըն-
ծայելով անընտանի խորթոյն՝ զհարազատուն եպերանս ա-
ծեն եւ գրեթէ ամօթ եւս համարին . ոմանք առ համազգիս

անդամ հայրենական լեզուաւ խօսիլ : Աբանչեղի՝ լեզուաւ խօսք. որք յաւէտ հրաշայլք թուին յանձինս իւրեանց քան արեւայքն ի վերնատան հոգեպարզեւ բաժակօքն :

()ն հապա, մանկունք Արամեան, թէ սիրէք սրտիւ զազգեւ զՀայաստան աշխարհն մեր՝ հետեւող լերուք այսպիսում հայրենաաէր Նահապետաւ. պինդ կալարուք զիմաստուն պատուէր մեծաշահ աւանդութեանց նորին. որ միմեայն է կապ յօղիչ եւ միացուցիչ հայկազանց տարաշխարհիկ որդւոց. որք իսկիւնս զանազան ազգաց եւ տէրութեանց գաղթակա նութեամբ տարածեալ կան : Երանի՛ թէ անջինջ արձանագրեալ լինէին իսիրտս եւ ի միտս նոցին այս բնաձիր օրէնք հայրենասիրութեան . որով թէ եւ յեզերս ծովուն Ուլկիա նու եւ ի կղզիս հեռաւորս թափառէին Արարատեան որդիք, տակաւին ճանաչէին գոլ հարազատ սերունդք Հայկայ զարմին :

Իայց աւանդ, մի թէ ազգեանց երբէք Արամեան պատուէր հայկազուն գաղթականաց Լեհաստանի . որք զհայրենասուր աւանդն առ ոտն տապալելով՝ չոքան զհետ օտարոտի լեզուաց եւ սովորութեանց, ընդ գերեզմանաւ խաչառ մոռացութեան թաղեալ ծածկեցին զբազմաչարուստ հայրենաձիր գանձն եւ այժմիկ կարօտին տաժանութեամբ մուրացածոյ, անհեթեթ, խեղճեկագոյն, օտարախորթ լեզուաց. որոց վասն ոչ միայն ողբայ մեռեալն Արամ հազարամեայ փոշխացեալ ոսկերոտօք, այլ եւ կենդանին Միծիւ թռուցեալ թեւօք երեւակայութեան մտաց եւ յածեալ զանաշխարհիկ վայրօք գաղթական հայկազանց՝ լայ մինչեւ ցյաւիտեան :



ՍԱՏԱՐԻՉ ԲԱՐԵՐԱՐԻ ՀԱՅՐԵՆԵԱՅ


Ի ՎԱՆԵՑԻՈՅ

Արամայ հայրենաշէն առաքինութեանց հանդիսարանին կարգը բարեբախտութեամբ կը դառնին բնիկ վանեցւոց այն ազնուամիտ անձինք . որոնք որ կամ բնաձիր առաքինութեամբ եւ կամ հեռաքնակալութեան Հայկազանց օրինակէն շարժելով՝ իրենք ալ բարերար եղան Վասպուրական Արծուոյն, որոնց ազգասէր անողներն ալ պէտք է որ հրատարակուին . որպէս զի համագլխի գաղթականներ լսելով ուրախ ըլլան եւ մանաւանդ սիրտնային ալ յուսով զուարճանայ ու հեռուանց հայրենակարօտ աչքով նային դէպ ՚ի Հայաստանը, տեսնան որ Հայկաձին բնականունդ որդիքը հայրենասիրութեան իւղով լապտերնին վառած գիշերապատ սահմաններու մէջը Հայոց նախնի ճոխութեանց գանձը կը փնտռեն :

Եւ թէ փայտն բռն հայրենիքս պաշտպանելով՝ կուգեմ որ հայրենակիցներուս պարծանքը արեւոտ նման փայլի տարաշխարհիկ հայկազանց աչքին . հապա ճմարիտը խօսելով տատաարի է ՚ի վեր կայ, որ քանի մը վանեցի ազգասէր իշխանաց պաշտպանութեամբ Վասպուրական նահանգի մէջ նոր եռանդ մտնալով ուսումնասիրութեան ճրագը վառուիլ սկսած է Բերականութեան արուեստ գիտցող հազուադիւտ անձը երբեմն իբրեւ զարմանք մատով ցոյց կ'ուտային , բայց հիմա գրեթէ հեռզհեռէ շատնալու վրայ է ուսումնասկանաց թիւը . որ ասիկայ յայտնի նշան մըն է Վասպուրական բնակչաց յաւաջադիմութեան : Որոնց վրայ ուրիշ անգամը արարագաներով պիտի գրեմք . թէ որչափ դպրոց կայ եւ որքան են աշակերտաց թիւը եւ իւրաքանչիւր դպրոց ինչ եղանակաւ կը կառավարուի : Միայն համառօտ յիշատակութեամբ՝ սա կը ծանուցանեմ արգոյ ընթերցողներուն, որ բնիկ վանեցւոց աղբափիկ ցուցակը կարդալով՝ այնպէս չկարծեն թէ Արծիւը սը-

տախտո է, նախորդ Թերթով կը խոստանայ հարուստ ցանկով մը հրատարակել Վանեցի Բարեբարները. ու յետոյ իր խոստ մոռնալն ներհակ կը տեսնուի : Արգարեւ փոքրիկ քաղաքի մը մէջը՝ հարկաւ նուազ կըլլան ազգասէր ու հարուստ գերդաստանները : մանաւանդ այնպիսի քաղաք մը, որ վաճառականութեան կեդրոնէն հեռու ըլլալով՝ վաճառաչահ յառաջագէտները սակաւ կը գտնուին իր մէջը :

Բայց Արծիւը կը տիրէ ու կը գողէ իր հայրենակիցները եւ իրենց նուէրը մեծ կը համարի ազգասիրութեան գանձարանին մէջը իրեւ այն սյրի կընծջը մէկ հատիկ լումայն. որուն արժէք ու մեծութիւնը՝ արժանի եղաւ երկնաւոր գանձապետին բերնէն դովութիւն ընդունել :



ԱՐԳՈՅ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԻ ԲԱՆԵՐԱՐԷ

ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ ԱՐԾՈՒՈՅՆ

Ղուրուշ

Հայրապետ Սապունճեանց	1000
Կարապետ Մ. Մանուկեան Թաշճի	3000
Ս. աճառակից Ընկերութեան Պարոնայք, Կարապետ	0000
Պօրօզանեան. Սարգիս Սրկոյեան. Յակովբ Լարստէ	0000
Ֆերեան. եւ Մ. Մարեան Ղուլիճանեան	1000
Ս. աճառակից Ընկերութեան Յարգի Անդամք Մ.	0000
Գէորգ Գալճեան. Մ. Յակովբ Պանիրեանց. եւ Մա	0000
նուկ Տէր Պօղոսեան	1000
Շահան Աղուանեան	0500
Մ. Մկրտիչ Թէրլէմէզեան	0500
Ս. Ագրիպաս Մ. Գէորգեան Տըպաղեանց	0500
Յարութիւն Չախունճեանց	0500
Յակովբ Աղուանեան	0500

Գրիգոր Զրաշխեան	0200
Յարութիւն Մ. Մարտիրոսեան Աւանցի	0500
Մ. Դաւիթ Սեւիկեանց	0250
Վարդան Թաւլարդանեան	0200

7650

ՏԵՍԱՐԱՆՔ ՀԱՅՐԵՆԻ ԱՇԽԱՐՀԱՅ

(Ըրոնակութիւն 21 էրէն)

ԵԱԵՂԵՑԻՔ

Մինչեւ ցարդ կարճ ի կարճոյ պատմածնիս գրեթէ նորա-
 ձեւ եւ դիւրեղծական բաներ էին եւ գեղջուկ շինուածներ :
 Բայց Այժմ ո՛հ հայրենասէր ոգի, աչքերդ դարձուր անգամ մը
 սուրբ եւ հնաշէն տաճարաց վրայ . ո՛հ աղեխորով տեսարան ,
 ինչ , կը նայիս , որ մէկն կիսակործան յարիւն ապաժուժ գե-
 տինը փռուած ի մահ վերաւորելոյ նման՝ հարիւրամեայ ժաւ-
 մանակաց ի վեր կը կոծէ՛ ու կը հեծէ , մէկայն անտերունջ ա-
 մայութեան՝ դամբան զգամ ի ձեանց եւ յանձրեւաց վնասեալ
 վերջին անխառնութեանը կը դիմէ : Միւսն իւր ամբակառոյց
 Հայկեան ճարտարութեամբ արուեստակերտեալ լինելուն հա-
 մար՝ խիստ եղանակաց ամէն սաստիկութեանց հետ պատերազ-
 մելով մինչեւ ցայն թիւ իւր գեղանի տեսքը տակաւին պա-
 հած է՝ հայկերան մանկտեաց սրտին մէջ դիտեալ ձեւ յախ-
 նեաց բաշագործութեան ոգին արթնցնելու համար :

Հնաւէր եւ հայրենասէր ոգի, մտացդ զօրութիւն վեր առ-
 երկիր դարելով եւ տար մինչեւ ինն հարիւր եւ սուել տա-
 լի յառաջ պատկերացուր հայրենակարօտ աչացդ դիմաց

Վաստակաւորական Արծրունի Թագաւորութեան ճոխ եւ վառահեղ ժամանակն : Որ գրեթէ Հայաստանի ընտիր եւ մեծ մասին վրայ տիրապետելով երեսուն եւ վեց հատ մեծամեծ եւ բազմամարդ գաւառներ իւր իշխանութեան զօրաւոր դաւաղանին տակ կը հովուէր եւ իշխանաստատ հրամանաւ բոլոր հիւսիսական խառնակրօն եւ բարբարոս ազանց դէմք զօրեղ պարիսպ մը ամրացած էր :

Իհնայսպիսի ճոխ եւ հարուստ ժամանակիմ հրաման կը նէ Արծրունի Սենեքերիմ Թագաւորն ստորին Վարագն շինելու : Ինչպէս որ կը վկայէ Թովմա Արծրունին ասելով : « Եւ ի ստորոտ լերինն շինեաց զհոյակապ եւ զհռչակաւոր մայրաքաղաք մենաստանացն զՎարագ . եւ կարգեաց ի նրմա սրս հաւատարիմն եւ զարդարեաց բազում կրօնաւորօք եւ երկնագումար դասու սուրբ քահանայիւք , եւ կարգեաց նոցա ռոճիկս եւ կեին ի խաղաղութեան ի գաւառն Վաստակաւորականի , ամենայն աշխարհաց անկեւոյց եւ գերեւոյց տեղի ապաստանի ի նմա գտանիւր : »

Սարազայ այս նախնի ճոխութեանցը նայելով Հրաւիրակն Արարատեան , իւր այսքանի Ազնիւ տողերն կը շարէ : « Ընդ երկայն եւ զառ ի վայր ճեմեալ ի ձորրդ ծաղկաբոյս լջեալ գնակոյք , ո՞վ մանկաբ , եւ ի ստորին Վարագըն մեծ : Որ փառաւորն է եւ պայծառ ի մէջ բոլոր մենաստանաց , եւ պարծի գոլ հաւասար իջման տեղւոյն Արարատայ լուսով Աստուածեղէն պատուեալ յերկնուստ որպէս զնա : Իսկ եւ իսկ այսր հասեալ պաշտօնատէր իշխանաց խումբ Հիմնեցին եւ նոր աստէն առճարս եօթն հաշանորոգ ի յաւերթ յիշատակ մեծամեծացն Աստուածայնոյ : Ընդուստ ի սկըզբանէ միշտ երեւեալ ի Հայաստան : » Բաւական Թող լինի բանասէր եւ հնաբէտ մտքերուն վերի հատուած բաներ Վարագայ սուրբ վանից հին ճոխութիւններն յոյց տալու համար :

Լոյրերն ժամանակ ժամանակ շատ երեւելի միանձունք : Վիճակաւոր Եպիսկոպոսներ , Առաքինի հայրենատէր վանահայր-

ներքին տնտեսական վարդապետներ այս վանքէս , ինչպէս որ հին պատմիչներ եւ յիշատակարաններ կիմացունեն , բայց աւանց քրջ շարունակաբար երկար ժամանակը , այսինքն 1000 տարուան միջոց : Հոս մնաց նա եւ մասն սուրբ խաչափայտին հրկատօսի , որ Հռիփսիմէ սուրբ կոյնն 'ի Հայաստան փախըտեալ ճանապարհորդած ժամանակը՝ Վարազայ լեռան գլուխ Գալիլեայ ըստած տեղն թողուց , որուն վրայ ուրիշ ժամանակ երկաթօրէն պիտի գրեմք :

Չեմք կարեր զանց ընել նա իւր Առաքել պատմագրի խօսքերը , որ Վարազայ վանից համար կը պատմէ թէ 1097 թուականին Հայոց պատահած մեծ եւ զարհուրեցիկ երկրաշարժէն 'ի հիմանց փրան Վապուրականի շատ մը վանքերը . ընդ որս եւ Վարազայ գեղեցիկ տաճարները , որուն սարսուլի յիշատակ մինչեւ հիմայ լայնաբաց պատառոտեալ որոնց վրայ կերեւին :

Իսկ վերստին նորոգութեան համար այսպէս կը գրէ նոյն պատմագիրը . « Այլ եւ Վանայ խօճէքն առաքելին առ խօջայ Ռուհիճանն , որ յաւուրն յայնոսիկ 'ի Արտանդնուպօլիս էր , հրաման առնող 'ի թագաւորէն Վան վերստին շինութեան . . . որ եւ խօջայ Ռուհիճանն առեալ հրաման 'ի թագաւորէն , առաքելաց 'ի Վան առ խօջայն . . . եւ նախ Արաւիկոս վարդապետն , որ էր առաջնորդ Վարազայ վանից , յանձն եւ առ շինել զժամատունն . զոր եւ շինեալ կատարեաց : Եւ խօջայ Ամիրխանն զսուրբ Խաչի եկեղեցին . Եւ Մարխաս Չալապին զԱստուածածնի եկեղեցին : Եւ խօջայ Տիւնիզին զսուրբ Սիգն եկեղեցին : Եւ խօջայ Յովհաննէան զսուրբ Անի եկեղեցին : »

Օյտօսիկ զեկեղեցիս շինեցին՝ եւ մնաց բերդով եկեղեցին , եւ բառասաւն արեղայից եկեղեցին : Եւ զվանից պարիսպն եւս շինեցին շուրջանակի բովանդակ , Եւ կատարեցաւ շինումն ներքին Վարազայ :

Այս մայրաքաղաք մենաստանաց սուրբ վանքս՝ ինչպէս որ վերը գրուածներէն կերեւի իւր ժամանակին ունեցեր է եօթն հատ փառաւոր կաթողիկէներով եկեղեցիքը՝ ըստ եօթն խոր-

հրդոց նորոյս Սիօնի . ինչպէս որ մինչեւ հիմայ անգամ նոյն
մտքով « Եէտի քիլիսէ » կրսեն սոյն վանիցս : Ա. եկեղեցին է
Սուրբ Գէորգ . Բ. Սուրբ Աստուածածին . Գ. Սուրբ Նշան .
Դ. Սուրբ Խաչ . Ե. Սուրբ Յովհաննէս կամ քառասուն արե-
ղայից եկեղեցի . Զ. Սուրբ Սովիա . Է. Սուրբ Սիօն եկեղեցին :

Ըստ ինչ եկեղեցի սրբոյն Գէորգայ զօրավարին որ եւ վայել-
չադեղ եւ ազնիւ , իւր արեւմտեան դրան վրայ երեք քարու-
կիր կամարէ բաղկացեալ երկու միապաղաղ քարէ սեանց վրայ
գաւթթմը ունի : Այս գաւթիս արեւելեան ճակատի ճիշտ
միջակէտն կը բացուի սուրբ եկեղեցւոյս կամարակապ սրբատաշ
եւ փառաւոր դռան , որուն բարձրութիւնը 10 եւ լայնու-
թիւնը 5 ու կէս թղաչափ է . Այս դրան վրայ երկամագիր
առուերով այս յիշատակարանս կը կարդացուի :

« Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՏԵԱՌՆ ՓԻԼԻՊՊՈՍ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ

ԵՒ ՅԱԲԵԹԵԱՆ ԹՈՒԱԿԱՆԻՆ Ռ . Ղ . Է . ԱՄԻՆ .

ԵՒ ՅՕԲԵԼԵԱՆ . Ի . ԵՒ ՄԻՆ . Խ . Է . ԸՆԴ ՆՄԻՆ .

ԿԱՄՕՔ ՏԵԱՌՆ ԲԱՐԵՐԱՐԻՆ .

ԵՒ ԶՕՐՈՒԹԵԱՄԲ ՍՈՒՐԲ ՆՇԱՆԻՆ .

ԴՄԲԵԹԱՅԱՐԿ ԽՈՐԱՆՔ . ՆՈՐԻՆ .

ԴԱՐՊԱՍ ԵՒ ՊԱՐԻՍՊ ԸՆԴ ՆՄԻՆ .

ՇԻՆԵԱԼՔ ՀԱՍՏԱՏԻՆ .

ՎԵՐԱԿԱՅՈՒԹԵԱՄԲ ՏԵՐ ԿԻՐԱԿՈՍ ՎԵՐԴԱՊԵՏԻՆ .

ԵՒ ԻՇԽԱՆԱՇՈՒՔ ԽՕՃԱՅ ԱՄԻՐԽԱՆԻՆ .

ՍԱՐՈՒԽԱՆԻՆ , ՌՈՒՀԻՃԱՆԻՆ , ԵՒ ՄԱՐՏԻՐՈՍԻՆ .

ԵՒ ՀԱԽԱՍԱՐ ԺՈՂՈՎՐԴԵԱՆՆ .

ԵՒ ՄԵՅՄԱՐ ՏԻՐԱՏՈՒՐԻՆ .

ՅԻՇԵԱ ՔՐԻՍՏՈՍ ՅԱԻՈՒՐ ԱՅԵՂԻՆ :

Այս արձանագրութենէն քիչ մը վար մէկ բարեպաշտա-
կան յիշատակարան մը եւս կայ որ կը կարդացուի այսպէս .

« ԴԱՐՑԵԱԼ ԴՄԵՐ ՀԱՅՈՅ ԹՈՒԻՆ ,

ՈՐ ԵՐ ՀԱՍՆԵԱԼ ՄԻՆՁ Դ (ՇԻՄԻՆ) 1

1 Այդ հինգ գրի իմաստն ինչ 1140 , որ ըսելն նոյն թիւնն է .

ԽՕՃԱՅ ՄԻՆԱՍԻ ՎԱՆԵՑԻՆ
ՕՐԿՆԵԱԼ ՈՐԴՈՒՅ ԵՂԵՕՐ ՆՈՐԻՆ
ԱՌՈՒՆ ՎԵԻԹԱՆ ԲԷԼ ՐՈՎԻՆ
ԵՏՈՒՆ ԻԳՈՒՌՆ ՍՈՒՐԲ ՆՇԱՆԻՆ
ԱՐՈՑ ԲՐԻՍՏՈՍ ՈՂՈՐՄԵՍԻ
ԵԱԻՈՒՐ ՄԵԾԻ ԻՍՏԱՍՏԱՆԻՆ ԱՄԷՆ » :

Դռնէն ներս մտածի՛ր պէս՝ զիմացդ կը բացուի մէկ
երկնաման փառահեղ դարպաս մը , բազմակամար սրբատաշ
քարէ շրջանակներով զարդարուած : Եկեղեցւոյ միջակէան
դու գտնի՛ս հետաւորութեամբ չորս հաւ լայնանիստ բա-
նանկիւն համակ սրբատաշ սիւներ կան : որոնց վերին սպառ-
ուածող վրայ կաւարտի տաճի եւ երկու գլխաւոր կամարաց
ծայրիկը եւ անոնց անմիջապէս վրայէն՝ ուղղակի միակտուր
շարի նման կը բարձրանայ խառուտիկ կաթուղիէն , ունի
հաւ մեծամեծ լուստուտներով վայելչապէս պայծառացած՝
նման վերնոյարկ մետու զփեան ամենափայլ խորանաց : Եւ
նուածոյն զիւրք ճիշդ քառանկիւն է , 15 կանգուն ՚ի լայն 15
յերկայն եւ 15 ՚ի բարձր . բաց ՚ի երկնասիւշ կաթուղիէն ,
որուն բարձրութիւնը վարի կամարաց կրկինն է , բոլոր բա-
վանդակ սրբատաշ գեղեցիկ թարերէ բաղկացեալ :

Ներսի կողմէն՝ թէ որոնց եւ թէ սիւններուն վրայ հին
նկարչութեամբ դժուած հսկայածեւ պատկերներ շատ կան :
ինչոյէս մեծին Կառանդիանոսի եւ Թէոդոսի պատկերները հին
շեշտեալան զգեստուց տարազներով : Առաքելոց՝ Հայրապե-
տաց եւ Հայ երեւելի Ղարդապետաց շատ պատկերներ : Ու
յոնց զգեստուց տարազ եւ փառահեղ տեսքը նկատող աչաց
անյագ փափաք մը կ'ընծայէ : Անկէց ետեւ կարեսնէ կրօնա-
բէր . բոքաւոր ջգերով ունրացած զիմացիւն պարանոց պէտք
է , որ երկար ժամանակ գլխոյն վերկեցութեանը զիմանալով՝
կարօտակեղ աչացը եւ սրտի պատարը լեցունէ : Եւ որ զար-
մանալին է՝ այն աստիճան մէկ ահարկու արձագանք մը ունի
այս բազմակամար Եկեղեցիս , որուն նման տակուին չեմ տե-

սած եւ ոչ մէկ տեղ, թէ որ մէկ փոքր ձայն մը փրթի մէջը՝
կը կարծես թէ երգեհոններ զարնուեցան :

Եկեղեցւոյ աջակողմեան դատուն մէջը մտած ժամանակդ-
մորմոքելի տեսարանի մը հանդիսատես կը լինիս . հնապատկեր-
մահարձանաց արծրունադէմ կերպարանք . որոնց ներքեւը ծած-
կեալ կան Հայկազանց ճոխ փառաց պատկները ինն հարիւր
ամաց 'ի վեր կափուցեալ աչօք թանձր 'ի բուն ննջած եւ հա-
մարեա թէ այսքան դարեր վրայ անցնելով մինչեւ ցայս թիւ-
շառ բիչ եղած են հայրենափափադ ոմանք . որ հետաքրքիր ըլ-
լալով Երծրունի մեծափառ ճոխութեանց՝ կարեկցարար հար-
ցուցերեն թէ ով են այս դիւցազունք , այսպէս անփառունակ
չքով սեւ հողապատեան տապանին մէջը թաղուած դառնա-
ղէտ ցաւոց հառաչանքներով կը հեծեն , եւ ի՞նչ է իւրեանց
կարեւեր խոցեալ սրտի ցաւն : Այս չիրմացս վրայի սփռոց-
ներն եւ տախտակամած բազմակն վեցունելով՝ թխադոյն մա-
հարձանիմ վրայ երկաթազիր տառերով այս Արձանագրու-
թիւն կը կարդացուի :

ԴԹՎԻՆ . Դ . Ժ . Զ . Ա :

ԱՅՍ Ե ՀԱՆԳԻՒՍ ՏԵՐ ՊԵՏՐՈՍ ԿԱԹՈՒ-
ՂԱԿՈՍԻ . ՈՐԻՏՐՈՒՊԻԶՈՆ ԶԳԵՏՆ ՃՈՐԴԻՆ
ԱՐԳԵԼԵԱՅ ԱՌԱՋԻ ԱՐԲՈՅԻՆ :

Այս դերեզմանէս 2 թղաչափ ի խոնարհ դէպ աջակողմն
կը կարդացուի այս երկաթագիր բանս :

ԱՅՍ Ե ՀԱՆԳԻՒՍ ՍԵՆԵՔԵՐԻՄ ԹԱԳԱՒՈՐԻՆ

Թ Զ . Ը :

Կաթուղիկոսի ձախ կողմն Սենեքերիմի դերեզմանին հա-
ւասարութեան շիրիմ մի եւս կայ՝ որուն մէջը կ'պառկի նոյն
Սենեքերիմ թագաւորի խուշուշ թագուհին , որ էր դուստր
Բազրատունի Գազիկ Ալքային : Ասոր յիշատակութիւնն
սուրբ Սովիա եկեղեցւոյ ճակատին վրայ քանդակուած է ,
որուն համար իւր տեղն պիտի խօսիմք :

Այս երեք տապաններուն քարերու վրայ շատ մը գիր գրելու համար գծեր քաշուած կան, բայց ինչ պատճառէ արգելուած լինելն յայտնի չէ : Թագաւորական շիրմացոյ վրայ ուրիշ ժամանակ շատ պղնիւ տեղեկութիւններ մեծ յոյս ունիմք տալու . առ այժմ այս մէկ վկայութիւնն թող բաւական լինի : որ Մատթէոս Ուռհայեցի պատմիչ երկոտասներորդ դարուն ստուգիւ Սենեքէրիմ Թագաւորին գերեզմանն հոս լինել կը յայտնէ այսպէս գրելով : « Յայտն ամի մեաւ Սենեքէրիմ Թագաւորն Հայոց եւ տարան զնա ի գերեզմանատունն հարց իւրոց . ուր ստաջին Թագաւորքն Հայոց Թադեալ կան ՚ի Վարդ վանքն սուրբ Նշանին , եւ անդ Թադեցին զՍենեքէրիմ ընդ հարսն իւրում : »

Սոյն տապանացո սրտաւուչ տեսարանին քիչ մը միջոց հանդիսատես լինելէս ետեւ . երբ կամէի հեռանալ՝ մէյմալ կարծես թէ քաջակորովն Սենեքէրիմ իւր տիւր շիրմէն ձայն արձակած եւ ձեռքը դէպ ՚իստիս երկնցուցած սկսեց ըսել .

Կայ դու վայր մի, քարեկամ,
Իմոյ ցաւոց լեր կըցորդ .
Լալօնք աչացս սաստկագին ,
Յորդեաց ըստ գարնան հեղեղին .
Լիճ պոյտքեալ շուրջ զինեւ ,
Ռսկերքս մաճուռ ներկեցաւ .
Ես տէր էի գաւառացդ ,
Որք ծիր ածեն լայնագիր :
Խնամոտ սիրով կաթոգին ,
Պահ պահէի ըստ աչաց .
Ո՛հ , հողմ ուռուցիկ Սիւլեմեան ,
Փոթորկելով աստ եհաս ,
Ժամէր լափել զհայրենիս ,
Հաւատս առնել տարամբո՛ւ .
Որոց զօրուն ՚ի գիմակ ,
Ուժ զօրութեանս ո՛չ եհաս :

Վասն այն յայնարհ Մերաստեան,
 Գաղթեալ ցաւով չողայ անդ .
 Բայց ծայր լերինդ վարագայ,
 Ոչ ծածկեցաւ իմ աչաց .
 Տիպ տաճարացդ աննրման,
 Որք իմ քրտամբք բարձրացան .
 Չեղեւ ջնջեալ իմ մտաց,
 Մինչեւ մահուն զիս կալաւ .
 Կրտակ թողի իմ որդւոց,
 Չիս մի թաղել յօտար հող .
 Այլ առ ոտմբք վարագայ,
 Որոյ ի սէր ժառեալ կամ,
 Ամփոփեցայց իքնարան .
 Աստ կամ ահա նոյն յուսով .
 Սպասեմ աւուրց դարնայնոյ .
 Չի ճետք սերունդք Արծրունեաց
 Բըճէճ՝ առեալ ըստ հաւուց,
 Գացեն նոր՝ բախտ նոր արեւ :

(Պիտի չարանախոյն .)

ԹԱՆԳԱՐԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԴՊՐՈՒԹԵԱՆՑ

ՅԵՐԱՆԱՅՐԻՍ

ԱՐԾՈՒՈՅՆ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԷ

Թուեա՛ր, Արծուիւ, Վասպուրական
 ՚ի Գարաւոր երբ ՚ի քուն,
 զքեզ կապեալ կաշկանդէին,
 Բեւեռք երկնից հաստաբուն :

Ասա Թուեա՛ր ՚ի թեւ թեթեւ
 զխորիւ թողեալ ծերունի .
 նորափետուր զարդարեցար
 յառոյգ ՚ի տիս նազելի :

Թաւր յԱրեւ լուսապայծառ
կնիքէ հայկեան Արքայից .

Անք հայկազանց առքեղ պընտն
Անք Արամեան երամկի :

Գազաթ Արծուոյէ այն ինչ ի Թագ
Թագիւ պընտնոյ շող ի շող .
շատ արագիւք գիշերահաւք
ի քէն կային սրտադող :

Թաւր հապա սիրուն Արծուի .
Թաւր Թաւր պողտախմ .
յայտ քո Թաւր ընթանէ ի
ես ի վաղուց փափագիմ :

Սաւառեւելոյէ հասցէ համբաւ
ու Թե մայն ի բելանդ .
այլ ի բուր յագգ հայկազանց .
ուք դրամին աստ եւ անդ :

Մի նեղեցին սըլաք Թեւոյ
քոյ նենգ ողայ ածել յուշ .
հերկըսային յարար իւրեանց
առնել զքոյս բանդագու :

Մասիս Նոյեան եւ Աղաւնի
եւ Արշալոյսն անդրանիկ .
երբ եւոպայ եւ Բաղմալիս
գրեղ առցին երջանիկ :

ՉԹեւ ընդ Թեւ կայեալ սիրով
ընդ այս վեհից վաղեմի
զԱյրարատեան բանալ զԱրեւ
ու իր նորոգ մը Արծուի :

Չարտար հեղեալ մեղմեմք ի քէն
Արծուիդ անմահ երկնաւոր .
ղայս կայ սիրոյ պահեալ յաւրժ
անմահ փառք նորանոր :

Իցէ Արծուիդ իմ աննման .
իցէ այն օր եւայն սրդ .
յորում Արիկն Հայաստանեայց
դարձի անդրէն յոսկեգար :

Տուր մեղ զայն օր յոր ի վերայ
գիցուք գըլտայ նոր Արծուոյս .
զյաղթական դաքնեայ պըսակ
եւ սաղաւարտն աղգալոյս :

Մարմինք Հայոց դեռ ի դոմբան
չեն անեալ քուն եւ դադար .

Դադարեցո՞ նորոգ փառք
Թորդ ոյնան Տէր Բարեբար :

Բանի Թորոսն Աստուած անմահ .
զագգըն Հայոց ի յերբ .
եւ զարտասուս հեղու շոյա՝
փոխան գետոց վըշտաբ :

Գու ստանայեալ աղգին Հայոց
փոխարինեալ զՀայրիկ .
գըւարթ Մայիս նա եւ ընդ այն
զաւեհաբեր Գալրիկ :

Արագածոյ Շոյ ծաղկանց
կոկոնախակ վարդի Թերթ .
Թերթ ի Թերթի ծաղկեցո Տէր
Թերթ շաղ ի շաղ ոսկեթերթ :

ԶԱրեւ յամպոյ Աքանապետ
հանել իւր Սաբաւով .
Միւթարեան քահանային
են պաշտտանք եւ կարօտ :

ՅԱԿՈՎԲ ՎԱՐԺԱՊԵՏ ՔԱԶԱՍ

ՆԱՅ Տ, ՄԻԻԹԱՐԵԱՆՑ

Օրէնտաւոյ Արքունի գաւառա
կան Ուսուցնարանի Աղեքսանդրա
պօլոս .

ԱՆՁՆԱՆՈՒԷՐ ԳՈՐԾԱԿԱԼԷՐ.

ԸՆԿԵՐԱԳՐՈՒԹԵԱՆ.

ՎԱՆ, Մհրտիչ Տ. Ատոմեան 'ի գրանոցի Վասպուրական
Արժուոյն :

ԿԱՐԻՆ, Խաչատուր Խան Տ, 'Ներսիսեանց եւ միանգամայն
գործակալ Տարօնոյ եւ Ռուսաստանի Հայոց :

ԲԱՂԷՇ, Մ, Ղարիպճան Աղա Մ, Շողիկեանց :

ՏՐԱՊԷՐՈՆ, Լղաճան Աղա Յովհաննիսեան :

ՊՕԼԻՍՊ, Յակովբ Աղուանեան Վանեցի 'ի Պալթաճի Խան :

ԶՄԻՒՌԻՆ, Պ, Սարգիս Տէր Մարգարեան Վանանդեցոյ :

ԲԵՐԻԱ, Յովհաննէս Աղա Միսաքեան :

ՍԱԼԱՄԱՍՏ, Յակովբ Միրզայեան Մէլիք Յակովբեանց. մի-
անգամայն գործակալ Պարսկաստանի Հայոց :



ԳԻՆ ՏԱՐԵՊԱՆ ԸՆԿԵՐԱԳՐՈՒԹԵԱՆ

Ի Վան, 'ի Կարին, 'ի Մուշ, 'ի Բաղէշ, 'ի Տրապիզոն 2 ու կէս
Օսմանցիքսան զուրուշանոց արծաթ Մէճիտիէ :

Ի Պօլիս, 'ի Զմիւռն, 'ի Բերիա, երեք արծաթ քսան
զուրուշանոց Մէճիտիէ :

Ի Ռուսաստան եւ 'ի Պարսկաստան, այսինքն 'ի Տփլիս, յԱ-
ղէքսանդրպօլ, 'ի Դավրէժ եւ այլն, չորս արծաթ Մանէթ :

Գին միոյ տետրակի 6 զուրուշ : Ճանապարհին ծախքը
Խմբագիրը պիտի վճարէ :

ԲՈՎԱՆԻ-ԱԿՈՒԹԻՒՆ

ՀԱՆԴԻՍԱՍՏԱՒԱԾՊԱՇՏՈՒԹԵԱՆԵԿԵՎԻՑԱԸԵՆՔԱՐՅ

Թաթևու Առաքել ընդէր իս 45-ի . . . 27

Առաքիւի Լաւճան Տ. Գաբրիէլ Ս. Գաբրիէլ Արք. Եղիշի-
պոյի Ստեփաննոս Սահակի . . . 34

ՀԱՆԴԻՍԱՐԱՆ 4ԱՅՐԵՆԱՇԵՆ ԱՌԱՔԻՆԵԱՅ

Արմ. Կարեն-Ղէի Կահարէ . . . 39

Սաբարէշ Բարեբաք Կարենեայի Ստեփաննոս . . . 44

ՏԵՍԱՐԱՆԻ ՀԱՅՐԵՆԻ ԱՇԽԱՐՀԱՅ

Մայրաքաղաք Ռեհաբոնայ Սարգ . . . 18

Եկեղեցի . . . (Հարոն-Նախ-Եղիշ . 21 Երեւ) 46

ԹԱՆԳԱՐԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԴՊՈՒԹԵԱՆՅ

"Յերեմայի" Արքիեպիս Ստեփաննոսի . . . 53

